Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 10-ի N 356 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և համայնքային ժողովներում հաստատված հետևյալ առողջապահական խնդիրների լուծումը՝ 1) բուժկետերի կառուցում, վերանորոգում, բժշկական սարքավորումների և դեղորայքի ներկրում ու տրամադրում, այդ թվում՝ նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի մասնագիտացված հիվանդանոցներին 2) գյուղական առողջապահական հաստատությունների համար վերապատրաստման անվճար դասընթացների կազմակերպում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ
3.	Բարեգործը	1. «ՇԷՆ-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue de Maubeuge, 75009, Paris, France 2. Հաց աշխարհին - Գերմանիայի եկեղեցիների ընկերակցություն, Bread for the World - Church Development Service Ñ³ëó»Ý՝ Caroline - Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany 3. Շվեյցարիայի միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ Bd de Grancy 17bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland 4. «Վարդանանց ասպետներ» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 8 Berkshire Dr., Winchester, MA01890, USA
4.	Ծրագրի կատարողը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ քաղ. Երևան, Նալբանդյան 110, հեռ.՝ 060 499 010, 010 567031, ՀՎՀՀ՝ 01503283

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերում, ԼՂՀ-ի հեռավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ, բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	160.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ հինգ տարվա համար
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ-ի հեռավոր, սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների բնակիչները: Գյուղերը, որտեղ կիրագործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Շեն» ԲՀԿ-ի ուսումնասիրությունների միջոցով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի և 2017-2022 թթ. ծրագրի «Սոցիալական ոլորտ» բաժնում տեղ գտած դրույթները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019-2023 թթ. ընթացքում կնորոգվեն և կկահավորվեն բուժկետեր, հիվանդանոցներ (արժեքը՝ 140.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ), աջակցություն կցուցաբերվի առողջապահական հաստատություններին՝ ուսուցողական ծրագրեր կազմակերպելու ուղղությամբ (արժեքը՝ 20.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ):
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Բժշկական սարքավորումների և դեղորայքի ներմուծում (նախատեսվող գինը՝ 80.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ), բժշկական սարքավորումների, շինանյութերի և ապրանքների ձեռքբերում ներքին շուկայում (նախատեսվող գինը՝ 30.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ): Կատարվելիք շինարարական աշխատանքների արժեքը կկազմի 30.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Մասնագիտացված կառույցներից կպատվիրվեն ուսուցողական դասընթացներ՝ առողջապահական հաստատությունների աշխատակազմերի վերապատրաստման նպատակով (արժեքը՝ 20.000 ԱՄՆ-ի դոլար):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավար-	«Շեն» ԲՀԿ-ն առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ-ի և

	ման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ԼՂՀ-ի առողջապահության նախարարությունների և նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքն ստուգելու համար: Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում: Համաձայն ընդունված կարգի՝ պարբերական հաշվետվություններ կներկայացվեն Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ